

ՀՈՒՎԱԾՆԵՐ

ԱՇԽԱՐՀԻ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-ԼԵԶՈՒ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ-ԼԵԶՈՒ ԻՄԱՑԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ԼԵԶՎԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Է. Ռ. ԱՓԱՅԱՆ

1. Նախնադարյան մարդու աշխարհընկալման ուսումնասիրությունը վերկայում է, որ նրա գիտակցության մեջ իրը և իրի անունը դեռևս ներկայացված են հղիլ շտարբերակված (սինկրետիկ) ամբողջության տեսքով: Անտիկ աշխարհում լեզվի տեսության սկզբնավորումը առաջին հերթին կապված էր «իր» և «անուն» հասկացությունների տարբերակման հետ, ինչն իր հերթին հավասարազոր էր գոյի կազմում երկու՝ արտալեզվական (օբյեկտիվ) և լեզվական (սուբյեկտիվ) շերտերի սահմանազատմանը և աշխարհի իրականություն—լեզու կաղապարի ստեղծմանը: Անտիկ լեզվափիլիսոփայության գարգացման ուշ շրջանում այդ երկու գոյաշերտերից երկրորդն իր հերթին ենթարկվեց երկփեղկման, ինչով (որոշ մոտավորությամբ և այլ անվանումների կիրառմամբ) ստեղծվեց իրականություն—մտածողություն —լեզու եռանդամ կաղապարը: Լեզվափիլիսոփայության գարգացման այդ փուլի սկզբնավորումը կարելի է կապել Արիստոտելին պատկանող հետևյալ դատողության հետ. «Այնպես, ինչպես գրեթե նույնը չեն բոլորի համար, այնպես էլ հնչյունակապակցությունները նույնը չեն: Սակայն հոգում գտնվող պատկերացումները, որոնց անմիջական նշանն է այն, ինչ (կա) հնչյունակապակցություններում, բոլորի համար նույնն են, ճիշտ այնպես, ինչպես նույնն են առարկաները, որոնց նմանակներն են պատկերացումները»¹: Ըստ այս ըմբռնման, այն, ինչ վերն անվանվեց իրականության սուբյեկտիվ գոյաշերտ, իր հերթին տրոհվում է պատկերացումների (այժմյան ավելի լայն ըմբռնմամբ՝ գիտակցության կամ մտածողության) և հնչյունակապակցությունների (բառային խորհրդանիշների՝ նեղ առումով լեզվի): Սա բովանդակության (պատկերացումներ) և նրա լեզվական արտահայտության (հնչյունակապակցություններ) սահմանազատման առաջին փորձերից մեկն է, ընդ որում դրանք միմյանց հակադրվում են, դարձյալ ժամանակակից եզրեր կիրառելով, ըստ ոչ պայմանականության (համամարդկային բնույթ ունեցող պատկերացումներից բաղադրվող բովանդակություն) և պայմանականության (լեզվից լեզու տարբերվող հնչյունակապակցություններից բաղադրվող արտահայտություն) հատկանիշների առկայության: Էլ ավելի հստակ ձևով այդ մոտեցումը երևան եկավ ստոիկների հայտնի «Նըշանադիտական եռանկյունու» մեջ, որտեղ եռանկյունու անկյունների գագաթներում նշված են իրը, նշանակման առարկան (նշանակությունը) և անունը (բառի հնչյունական կողմը), որոնցից առաջինը համապատասխանում է Արիս-

¹ Տե՛ս Գ. Զահուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Ե., 1960, էջ 72—73:

տոտեղի հիշատակած առարկաներին, երկրորդը՝ պատկերացումներին, իսկ երրորդը՝ հնչյունակապակցություններին (համապատասխանաբար՝ իրականությանը, մտածողությանը և լեզվին)։

Տվյալ դեպքում մեզ համար կարևոր է, նախ, այն հանգամանքը, որ անտիկ աշխարհում թե՛ սուրբկտիվ-լեզվական և թե՛ օբյեկտիվ-արտալեզվական իրականությունները (վերջինս՝ այն շափով, որ շափով այն հարաբերակցության մեջ է դրվում լեզվականի հետ) դեռևս ընկալվում էին ոչ թե որպես ամբողջական ու համակարգված կառույցներ, այլ որպես մեկուսացած տարամակարդակ տարրերի («իրերի», «պատկերացումների», «անունների») կուտակումներ։

Միջնադարյան հայկեցողական բերականության մեջ նշված տարամակարդակային տարրերն ի մի բերվեցին և ենթարկվեցին հզոր ընդհանրացման, ինչի շնորհիվ այդ երեք մակարդակների փոխհարաբերությունների խնդիրը ներկայացվեց որպես ոչ թե գոյություն ունեցողի առանձին տարրերի կամ դրանց խմբակցությունների, այլ նրա ամբողջական մակարդակների (գոյաշերտերի) և վերջիններիս փոխհարաբերությունների խնդիր։ Ողջ եղածը տարբերակման (շերտավորման) ենթարկվեց ըստ գոյանդանակների տարբերության հատկանիշի և բաժանվեց երեք շերտերի՝ գոյության եղանակներ, ըմբռնման եղանակներ և նշանակման եղանակներ, համապատասխանաբար՝ իրականություն, մտածողություն կամ գիտակցություն, լեզու։ Ընդհանուր առմամբ այստեղ ոչ միայն պահպանվում և խորացվում էր գոյի՝ Արիստոտելից ժառանգած կաղապարումը, այլև մտածողության ըմբռնումը որպես բուն գոյի համարժեք կամ ոչ պայմանական արտացոլում, իսկ լեզվի ըմբռնումը՝ որպես գոյի (և մտածողության) պայմանական նշանակում։ Սակայն ի տարբերություն արիստոտելյան-ստոիկյան հայեցակարգի, այստեղ 1) գոյաշերտերին և նրանց ըմբռնմանը հաղորդվեց ներքին դինամիզմ։ միջնադարյան «մոգիստները» համարում էին, որ մտածողական ու լեզվական գոյանդանակները հարաբերականորեն անկախ են բուն գոյության եղանակներից (սրանով սխոլաստներն, ըստ էության, ներմուծեցին խոսքի մասերի փոխանցման՝ տրանսպոզիցիայի, և շարահյուսական կառույցների փոխակերպման՝ տրանսֆորմացիայի հասկացությունները, որոնք ընդունված է համարել 20-րդ դարի լեզվաբանության պատկանելությունը), այսինքն՝ նրանք հասան այն գաղափարին, որ միևնույն իրական էությունը, ասենք՝ իրր, մտքի-լեզվի միջոցով հնարավոր է ներկայացնել տարբեր կերպ՝ որպես հատկանիշ, հարաբերություն, գործողություն և այլն, կամ որ միևնույն իրողությունը կարելի է պատկերել տարբեր, ասենք՝ ներգործական և կրավորական հայեցակետերով, 2) նրանք հայտնաբերեցին, որ գոյության եղանակների տիրույթում պասիվորեն պարունակվում են նաև ըմբռնման ու նշանակման եղանակները, որոնք լոկ առկայացվում են մտածելու և խոսելու գործընթացներում։ Հայեցողական քերականության մեջ թերևս ավելի ընդգծված և խոր ձևով, քան որևէ այլ հիբրոպական լեզվափոխ-սոփայական ուսմունքի շրջանակներում, գիտակցվեց լեզվականի և ոչ լեզվականի փոխկապակցվածությունն ու փոխներթափանցվածությունը. մասնավորապես ընդունվեց, որ ողջ լեզվական, ինչպես նաև մտածողական աշխարհներն ինքնին պասիվորեն տրված (ներգրված) են արտալեզվական-արտամտածողական աշխարհի կազմում, ուստի և լեզվամտածողական տեսանկյունից դիտված՝ արտալեզվամտածողական աշխարհը լեզվական-մտածողականի հրենարավորությունն է միայն (նրա ներամփոփ կամ ներունակ վիճակը)։ Այս դրույթի ապացույցը թեկուզ հենց այն պարզ հանդամանքն է, որ մենք միշտ մտածում և խոսում ենք մտքից ու խոսքից դուրս գտնվող սրևէ բանի մասին (անգամ երբ խոսքի առարկա է դառնում լեզուն, այն ներկայացվում է իրրև

սովորական արտալիզովական առարկա՝ այսպես կոչված «օբյեկտ-լիզու»): Թվում է, թե զործնականում մոռացութեան մատնված այդ դադափարների վերակենդանացումը վերին աստիճանի արդասավոր կլինե՞ր թե՛ լիզվի (նակ՝ մտածողութեան) և թե՛ իրականութեան համարժեք ըմբռնման համար:

Նոր ժամանակներում, եթե մի կողմ թողնենք որոշ բացառութիւններ, որոնցից մեկի (և ամենակարևորի) մասին կխոսվի ստորև, իրականութիւն-մտածողութիւն-լիզու եռանդամ կադապարի հիմնավոր լինելը, ըստ երևույթին, ընդունվում է իբրև վերջնականապես հաստատված հավատամք: Ընդ որում, իրականութիւն-լիզու հարաբերակցութիւնը գործնականում քննվում է նույնքան հազվադեպ, որքան հաճախ է քննվում լիզու-միտք հարաբերակցութիւնը: Այսպես, լիզվաբանութեան ներածութեան բազմաթիվ ձեռնարկներում այդ հարաբերակցութիւններից առաջինն ընդհանուր ձևով առհասարակ չի նշվում (թեև մասնավոր դեպքերում, օրինակ՝ բառի առարկայական վերաբերութեան հարցը ներկայացնելիս, կամա թե ակամա դիմում են հենց լիզվի արտալիզովական կապերին): Անգամ ստորոգման երևույթը, որի հիմնական դերը հենց լիզվական և արտալիզովական իրականութիւնների մտավոր, հոգեկան և առարկայական կապի հաստատումն է, այդ ձեռնարկներում հաճախ հանգեցվում է հատկանիշի և առարկայի՝ զուտ լիզվածանաչողական (ոչ գոյարանական) եղանակով մեկնաբանվող կապի, ուստի և հարց է ծագում, թե ստորոգումը ինչո՞վ է տարբերվում պարզ որոշչային հարաբերութիւնից, որը նույնպես ծառայում է առարկայի և հատկանիշի միջև եղած կապի ներկայացմանը:

Ընդհանրացնելով ասվածը՝ կարելի է նշել, որ լիզվափիլիսոփայութեան պատմութեան մեջ առանձնանում է գոյի շերտավորման երկու տարբերակ.

1) վաղ անտիկ շրջան.

իր	անուն
(արտալիզովական կամ օբյեկտիվ իրականութիւն)	(լիզվական կամ սուբյեկտիվ իրականութիւն)

2) ուշ անտիկ, միջնադարյան և նոր շրջաններ

ուշ անտիկ շրջան.

իր	նշանակման առարկա	անուն
Միջին դարեր.		
գոյութեան եղանակներ	ըմբռնման եղանակներ	նշանակման եղանակներ

Նոր ժամանակներ

իրականութիւն	մտածողութիւն	լիզու
--------------	--------------	-------

Թվում է, թե այս երկու կադապարներից ավելի հինը՝ երկանդամը, եռանդամից պակաս չափով տարբերակված ու մշակված լինելով հանդերձ, այնուամենայնիվ, որոշ ճշտումներից ու լրացումներից հետո կարող է միանգամայն հիմնավոր կերպով ընդունվել որպես ավելի խոր, իրական գոյավիճակին ավելի ճշգրտորեն համապատասխանող կադապար: Հենց այս դրույթի բացահայտմանն է նվիրված սույն հոդվածը:

2. Եռանդամ սահմանազատման անբավարար լինելու պատճառներից մեկն այն է, որ ինքը՝ մտածողութիւն-լիզու հարաբերակցութիւնը, հիմք է դառնում մի շարք աղավաղումների, որոնք առաջին հայացքից զուտ եղբարանական (տերմինաբանական) բնույթ ունեն, բայց ըստ էութեան հանգեցնում են եղածի իրական պատկերի նշանակալի ձևափոխման: Սկսենք նրանից, որ լիզվի ու մտածողութեան ուղղակի զուգադրումը այդ եզրերի բովանդակութեան գոյու-

թյուն ունեցող մեկնաբանությունների սահմաններում զուրկ է տրամաբանական հիմնավորվածությունից: Բանն այն է, որ մտածողությունը ժամանակի մեջ ծավալվող գործընթաց է (ճանաչողության գործընթաց), մինչդեռ լեզուն որպես այդպիսին արտսթամանակյա հարաբերությունների ու տարրերի համակարգ է (ըստ Հեգելի դիպուկ սահմանման՝ խոսքի համակարգ): Այնինչ համակարգն ու գործընթացը պարզապես հակադիր (դիալեկտիկական հակադրամիասնություն կազմող) բաներ են, առաջինը՝ որպես ստատիկ ներունակ (պոտենցիալ) էություն, երկրորդը՝ որպես կինետիկ իրային (ռեալ) երևույթ: Մտածողության գործընթացի հետ անմիջականորեն ղուգադրելի է ոչ թե լեզուն, այլ վերջինիս գործընթացային դրսևորումը, իսկ իբրև այդպիսին Սոսյուրից (թերևս անգամ ավելի վաղ շրջանից) սկսած ընդունված է դիտել խոսքը: Այսպիսով, այս դեպքում ճշգրտորեն ընտրված հասկացական զույգ պետք է համարել ոչ թե մտածողություն-լեզու, այլ մտածողություն-խոսք զույգը (ի դեպ, վաղուց ի վեր վերջինս համարվել է հոգեբանության ուսումնասիրության գլխավոր առարկաներից մեկը): Փիլիսոփայական առումով նույնը հանդես է գալիս ճանաչողություն-խոսք զույգի տեսքով: Մի կողմից, մարդկային ճանաչողությունն առնվազն տրամաբանական մակարդակում իրացվում է բացառապես խոսքի մեջ և խոսքի միջոցով, իսկ մյուս կողմից, խոսքային ամեն մի գործողություն (ակտ) պարունակում է մարդկային ճանաչողության գոնե նվազագույն առաջխաղացում: Ինչ վերաբերում է լեզվին, ապա վերջինս անմիջականորեն ղուգադրելի է ոչ թե մտածողության, այլ այն համակարգի հետ, որն ընկած է մտածողության գործընթացի հիմքում, ճիշտ այնպես, ինչպես խոսքի գործընթացի հիմքում ընկած է իր իսկ՝ լեզվի համակարգը: Իսկ որպես նման ստատիկ-պոտենցիալ համակարգ ընդունվում է գիտակցությունը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «գիտակցություն» բառն այնուամենայնիվ պահպանում է գործընթացության որոշ երանգ, ինչպես նաև այն, որ լեզուն որպես այդպիսին խոսքի գործընթացից դուրս սովորաբար չի գիտակցվում (պատկանում է ենթադիտակցության ոլորտին, այնպես որ «լեզվական գիտակցություն» ընդունված եղբր նպատակահարմար է փոխարինել «լեզվական ենթագիտակցություն» եզրով), այս դեպքում գերադասելի է գործածել գիտելիք եզրը (հին հուն. episteme), իսկ գիտակցություն եզրը՝ կիրառել որպես համակարգ-գիտելիքի և գործընթաց-մտածողության ամբողջությունը նշող եզր: Լեզուն աշխարհի մասին ունեցած գիտելիքի գոյաձևն է՝ խոսքային-մտածողական կամ ճանաչողական գործողությունների ընթացքում ձևավորված գիտելիքի համակարգը:

Եթե մտածողություն-լեզու եզրաբանական հարաբերակցության սահմաններում «մտածողություն» եզրը փոխարինվի ավելի ընդհանուր «գիտակցություն» եզրով, ապա համանման փոփոխություն պիտի կրի նաև այդ հարաբերության մյուս կողմը՝ լեզուն, այն է՝ «լեզու» եզրի փոխարեն պետք է մտցվի առաջժմ որոշ շափով պայմանական հնչողություն ունեցող, բայց ըստ էության համապատասխան իրողությունը ճշգրիտ վերարտադրող «լեզվախոսք» եզրը: Նշված հարաբերակցությունների ողջ պատկերը կստանա հետևյալ տեսքը.

գիտակցություն	լեզվախոսք
գիտելիք	լեզու
մտածողություն (ճանաչողություն)	խոսք

Քանի որ սուբյեկտիվ իրականության գոյության իմաստը օբյեկտիվ իրա-

² ՏՃՍ Դձաւկյան Գ. Բ., Օբщее и армянское языкознание, Ереван, 1978, էջ 19:

կանության արտապատկերումն է (և դրանով՝ նրա, այսպես ասած, ինքնագիտակցումն ու գոյաբանորեն ավարտուն՝ օբյեկտասուբյեկտային, վիճակի նվաճումը), ապա օբյեկտիվ իրականության կազմում ևս պետք է գոյություն ունենա համապատասխան երկփեղկվածություն, որն ընկած կլինի սուբյեկտիվ իրականության նշված երկփեղկվածության հիմքում: Ակնհայտ է նաև, որ այդպիսին պետք է համարել օբյեկտիվ իրականության երկփեղկվածությունը երկու համապատասխան՝ համակարգային ու գործընթացային հատկանիշներով օժտված կողմերի, համապատասխանաբար՝ գոյի (որպես օբյեկտիվ աշխարհի ստատիկ ներունակ համակարգի) և լինելիության՝ das Werden (որպես այդ աշխարհի կինետիկ իրային գործընթացի): Այսպիսով, իրականության երկու հիմնական դրսևորումները՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ իրականությունները ի մի բերող հարաբերակցությունները հնարավոր է դառնում ներկայացնել հետևյալ գծապատկերով.

օբյեկտիվ (արտալեզվական) իրականություն	սուբյեկտիվ (լեզվական) իրականություն								
գոյ լինելություն	<table border="0"> <tr> <td style="text-align: center;">գիտակցություն</td> <td style="text-align: center;">լեզվախոսք</td> </tr> <tr> <td style="text-align: center;">գիտելիք</td> <td style="text-align: center;">լեզու</td> </tr> <tr> <td style="text-align: center;">մտածողություն</td> <td style="text-align: center;">խոսք</td> </tr> <tr> <td style="text-align: center;">(ճանաչողություն)</td> <td></td> </tr> </table>	գիտակցություն	լեզվախոսք	գիտելիք	լեզու	մտածողություն	խոսք	(ճանաչողություն)	
գիտակցություն	լեզվախոսք								
գիտելիք	լեզու								
մտածողություն	խոսք								
(ճանաչողություն)									

Գոյ-գիտելիք/լեզու վերին շարքը բնորոշվում է «ստատիկութուն» (անշարժութուն), «համակարգայնություն», «ներունակություն» (ինչպես նաև, փոխիսոփայական առումով, «էութենականություն», «ընդհանրականություն» և այլն), իսկ լինելիություն-մտածողություն/խոսք ստորին շարքը՝ «կինետիկություն (շարժականություն)», «գործընթացություն», «իրայնություն» (ինչպես նաև՝ «երևութայնություն», «եզակիություն» և այլն) տարբերակիչ հատկանիշներով: Ժիշտ այդպես էլ «օբյեկտիվ իրականություն» ձախակողմյան շարքը բնորոշվում է «ներունակ սուբյեկտիվություն», իսկ «սուբյեկտիվ իրականություն» աջակողմյան շարքը՝ «իրային (իրայնացված) սուբյեկտիվություն» (վերջին հաշվով նաև՝ «իրայնացված օբյեկտիվություն») տարբերակիչ հատկանիշներով: Այս կերպ հաստատվում ու ծավալվում է միջնադարյան մտածողների այն խորաթափանց գաղափարը, ըստ որի, սուբյեկտիվ աշխարհի նկատմամբ օբյեկտիվ աշխարհը լոկ ներունակ գիտակցություն/լեզվախոսք է (գոյը՝ ներունակ գիտելիք-լեզու, լինելիությունը՝ ներունակ մտածողություն-խոսք), իսկ օբյեկտիվ աշխարհի նկատմամբ առնված սուբյեկտիվ աշխարհը՝ լոկ օբյեկտիվ աշխարհի իրայնացում (օբյեկտի (ինքնա)գիտակցում), ընդ որում, իրայնացման ավարտական փուլը գիտելիք-մտքի լեզվախոսքային մարմնավորումն է՝ գիտակցության՝ սուբյեկտի կողմից կատարվող օբյեկտիվացումը (բառային լեզուն՝ հատկապես տրամաբանական, իսկ մարդկային մշակույթը՝ առհասարակ բանական գիտակցության նկատմամբ): Ողջ իրականությունն այս կողմերի փոխներթափանցվածությունն է, նրանց փոխանցումն ու համադրումը:

Քննարկվող գծապատկերում նկատվում է նաև որոշ անհամաչափություն, այն է՝ սուբյեկտիվ իրականությունն այնտեղ ներկայացված է երկու (գիտակցություն-լեզվախոսք), այնինչ օբյեկտիվ իրականությունը՝ միայն մեկ բաղադրիչով: Դեպի անտիկ շրջանի հնագույն երկանդամ կաղապարը ստորև կատարվելիք վերադարձը, կարծում ենք, հնարավորություն կտա վերացնելու նաև այդ անհամաչափությունը:

3. Ինչպես նշվեց, միասին վերցրած գիտակցությունն ու լեզվախոսքը

սպառում են համաշխարհային ամբողջի՝ վերը նշագծված սուբյեկտիվ կողմի առկա կազմը: Սակայն պարզ է նաև մի այլ բան. նույնիսկ այս տեսքով առնելված՝ սուբյեկտիվ իրականությունն պատկերը մնում է թերի և ճշգրտման կարիք ունի առնվազն եզրաբանական առումով: Եվ իսկապես, անկախ այն բանից, թե մենք ինչպե՞ս ենք անվանում բովանդակության ոլորտին վերաբերող որևէ էություն՝ գիտակցություն, գիտելիք, մտածողություն, իմացություն և այլն, և լեզվական արտահայտության ո՞ր բաղադրիչի կամ կողմի հետ ենք դրանք հարաբերակցում (լեզու, խոսք, լեզվախոսք...), ակնհայտ է, որ բովանդակային-գիտակցական-մտածողական տարբերը նման մոտեցման դեպքում ամբողջովին (իսկ այս մոտեցման ավելի մեղմացրած տարբերակի դեպքում՝ մասամբ, տե՛ս ստորև) դուրս է բերվում լեզվախոսքային ոլորտի սահմաններից: Լեզուն փաստացիորեն (թեև սովորաբար՝ շփտակցված կերպով) դիտվում է որպես բովանդակությունից, նշանակությունից, իմաստից զուրկ «մաքուր» նշանակիչ՝ գիտակցական-մտածողական աշխարհի զուտ արտաքին ձև: Որքան էլ դա զարմանալի թվա, նման մոտեցումը բնորոշ է բազմաթիվ մարքսիստ գիտնականներին, թեև ուղղակիորեն հակասում է Մարքսի և էնգելսի այն հայտնի դրույթին, ըստ որի, լեզուն գիտակցության «անմիջական իրականությունն» է (այն է՝ գիտակցությունից ներհանրեն անխղիչի մի բան):

Անշուշտ, գիտնականին իրավունք է վերապահվում որևէ գիտական եզրին տալու այս կամ այն իմաստային մեկնաբանությունը (մասնավորապես, լեզուն և խոսքը մեկնաբանելու որպես մաքուր արտահայտություն՝ արտաքին ձև), միայն թե դա պետք է սրվի բացահայտորեն և պետք է ապացուցվի նման եզրագործածության հիմնավոր կամ գոնե նպատակահարմար լինելը, ընդ որում այդ եզրագործածությունից պետք է արվեն բոլոր անհրաժեշտ բավանդակային հետևությունները: Սակայն դարձյալ փաստացիորեն, ուսումնասիրողներից և ոչ մեկը այնքան հեռու չի գնացել, որպեսզի հրաժարվի լեզվի կամ խոսքի ավանդական դարձած «երկկողմային» ըմբռնումից՝ որպես բովանդակության և արտահայտության պլաններն ընդգրկող կառուցյան, որոնք մտքի նկատմամբ կատարում են ոչ միայն արտաքին, այլև ներքին ձևի գործառույթ: Ուստի տեսականորեն (ավելի ճշգրիտ ձևակերպմամբ՝ եզրաբանորեն) լեզուն մտածողությունից անջատելու հետ մեկտեղ գործնականում (սովորաբար անհետևողականորեն) շարունակում են ընդունել դրանց՝ մեկ ամբողջություն լինելու գաղափարը: Իմացաբանական (մտածողություն և այլն) զուտ իդեալական ոլորտին դրանով վերագրվում է գոյաբանորեն իրական կարգավիճակ (ընդունվում է, որ մտածողությունն ու առհասարակ բովանդակությունը կարող են գոյություն ունենալ և գոյություն ունեն ինքնին՝ անկախ արտահայտությունից), ինչով սուբյեկտիվ իրականությունն ըստ էության տրոհվում է երկու գոյաբանական բնույթ ունեցող շերտերի՝ լեզվի ու գիտակցության: Լեզուն զրկվում է մտքի դրսևորում լինելու գործառույթից, իսկ միտքը ներկայացվում որպես դրսևորումից անկախ գոյով օժտված՝ որևէ կերպ շնչութեանացվող մի բան: Այսպես վարվող մատերիալիստները կատարում են մի սխրանք, որին դժվար թե ընդունակ լինեին ամենահամարձակ իդեալիստներից շատերը:

Այդ մոտեցման ավելի մեղմ տարբերակն այն է, ըստ որի ընդունվում է, թե իր գոյություն ունի երկու անսակի մտածողություն կամ գիտակցություն, մեկը՝ լեզվին շահագեցվող կամ արտալեզվական, մյուսը՝ լեզվի մեջ պարփակված բուն լեզվական (լեզվախոսքային): Բովանդակության աշխարհը ենթարկվում է դուալիստական տրոհման, ընդ որում, սովորաբար առանց որևէ հիմնավորման, ավելին, միաժամանակ տեսականորեն ընդունելով, որ հենց լեզուն է մտածողության և այլ նույնակարգ էությունների միակ գոյաձևը:

Այս մտտեցման ամենաբնորոշ դրսևորումներից մեկն այն է, երբ տրամաբանական էությունները՝ հասկացությունը, դատողությունը, մտահանգումը, դուրս են բերում լեզվի սահմաններից՝ դրանք հայտարարելով զուտ տրամաբանական, բայց ոչ լեզվական կարգեր, կամ էլ հրե խոսում են բովանդակության ողջ ոլորտում իշխող «հասկացական կատեգորիաների» մասին: Անշուշտ, լեզվական բովանդակության տիրույթը չի սպառվում տրամաբանական մակարդակով. բացի զուտ հասկացականից լեզվում և հատկապես խոսքում, որպես նրանց բովանդակային տարր, հանդես են գալիս նաև հոգեբանական պատկերացումները և անգամ (մի բան, ինչը երբեք չի մատնանշվում) պարզ առարկայական ընկալումները (այն դեպքում, երբ մարդ խոսում է անմիջական շրջապատում զգայականորեն ընկալվող երևույթների մասին): Եթե պատկերացումներն ու առարկայական ընկալումները կարող են գոյություն ունենալ նաև բառային արտահայտությունից անկախ (նկատի ունենք մասնավորապես կենդանիների, հրեխանների, նախնադարյան մարդկանց կամ թեկուզ քնաթափախ և կամ արեբցման վիճակում գտնվող «ժամանակակից» մարդու, ինչպես նաև գիտակցության առկայացման մի շարք այլ վիճակներ), ապա տրամաբանական մտածողությունն իբրև էպոս «ինքնագիտակցող» մտածողություն, ներքնորեն բառային (միայն բառերով մարմնավորվող ու բառերում ծավալվող) մտածողություն է, որն առհասարակ անհնարին է բառերից ու նրանց հնչյունական նյութից անկախ ձևով: Տրամաբանական մտածողությունը լեզվախոսքային մտածողության հենց այն միակ մակարդակն է, որն սկզբունքորեն անանջատելի է բառային լեզվից կամ նրան փոխարինող պայմանական նշանների համակարգերից: Մասնավորապես հասկացությունը պետք է պատկերացնել ոչ թե իբրև բառի բովանդակությունից անկախ («դուրս») գոյություն ունեցող էություն, այլ որպես այդ բովանդակության ամենախորքային շերտը, որի կառուցվածքի ավելի մակերեսային շերտերն են այդ բովանդակությունը մասնավորեցնող ու հարստացնող պատկերացումներն ու առարկայական ընկալումները: Ուստի և, հակառակ շատ հաճախ արտահայտվող կարծիքի, հասկացությունները, դատողությունները, մտահանգումները ոչ միայն տրամաբանական, այլև լիարժեք լեզվաբանական կատեգորիաներ են, որ կազմում են լեզվաբանական հետազոտության միանգամայն օրինական առարկան, միայն թե տրամաբանությունը դրանք ուսումնասիրում է «ինքնին» (զրտված ձևով), իսկ լեզվաբանությունը՝ կապված ինչպես բառիմաստի և ուրիշ լեզվամիավորների իմաստային այլ մակարդակների, այնպես էլ հնչյունական և այլ արտահայտաձևերի հետ (կամ զոնե՝ նկատի ունենալով հասկացականի սկզբունքային լեզվական արտահայտվելիությունը):

Ինչ վերաբերում է «հասկացական կատեգորիաներին» (Ա. Ա. Մեյլանինով, այլ տեսանկյուններով և եզրաբանությամբ՝ Ց. Բրյունո, Օ. Ծսպերսըն), ապա տվյալ անվանումն ինքնին բավականին տարօրինակ է. չէ՞ որ կատեգորիաները ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ այլ հասկացություններ կարգավորող (համակարգող) հասկացություններ, այսպես ասած՝ «հասկացությունների հասկացություններ», ուստի «հասկացական կատեգորիա» պարզապես նշանակում է «հասկացությունների հասկացությունների հասկացություններ», եթե անգամ ընդունենք այդ եզրի օգտակարությունը, հենց դրանով կհաստատենք, որ կատեգորիաներից անգամ ամենարնդհանուրները (այն է՝ հասկացական կատեգորիաները) ևս ունեն իրենց անշրջանցելի լեզվական արտահայտությունը, որն է «հասկացական կատեգորիա» բառակապակցությունը, չենք խոսում արդեն ավելի մասնավոր բնույթ ունեցող հասկացական կատեգորիաների մասին, ինչպիսին են «թիվը», «ժամանակը», «պատճառը», «գործողությունը» և բառերով լեզվականորեն ձևավորված (պարտադիր լեզվական արտահայտությամբ

օժտված) նման այլ կատեգորիաներ. սա ևս մեկ ապացույց է այն բանի, որ հասկացութիւնը, որքան էլ ձգտի ապանյութական մարտութեան, որպէս իր բուն գոյի ներքին նախապայման ենթադրում է որևէ հնչյունային կամ այլ ձևի առկայութիւն:

Քվում է, թե գիտակցութեան, մտածողութեան, գիտելիքի երկու՝ լեզվական (արտահայտված) և ոչ լեզվական (չարտահայտված) շերտերի տարբերակումը որոշակի թշուրիմացութեան արդյունք է: Արտահայտվել, նշանակում է ձեռք բերել իրային գոյավիճակ, ուստի, շարտահայտված գիտակցութիւնը պարզապէս նույն լեզվագիտակցութիւնն է՝ դեռևս ներունակ («ինքնին») վիճակում, ինչպէս և, ասենք, ամեն մի ինքնին անիմաստ հնչյունախումբ, քանի դեռ այն չի վերածվել որևէ լեզվական նշանի, դեռևս ներունակ կամ լոկ հնարավոր արտահայտութիւն է՝ «լեզու»: Եվ բանի որ գիտակցութիւնը գոյութիւն ունի հենց (և միայն) լեզվական ձևով (բառիս ամենալայն առումով՝ ներառյալ ոչ միայն նեղ իմաստով մարդկային լեզուն, այլև նրան զուգորդող կամ փոխարինող նշանային համակարգերը, ինչպէս նաև գիտութեան, տեխնիկայի «լեզուները», անգամ, կենդանական աշխարհում, կենդանիների արձակած ձիչերը), ապա գիտակցութեան աշխարհը լեզվական/արտալեզվական երկատման հայեցակետից անհրաժեշտաբար և սպառիչ կերպով ընդգրկվում է այդ տրոհման առաջին բաղադրիչով: Իր երկու՝ ներունակ-ստատիկ (գիտելիք) և իրային-կինետիկ (ճանաչողութիւն կամ մտածողութիւն) գոյավիճակներով հանդերձ, իր դրսևորման բոլոր մակարդակներով ընդհուպ մինչև տրամաբանականը (և, ինչպէս տեսանք, վերջինում առավել անհրաժեշտաբար ու ակնհայտորեն), գիտակցութիւնն ընդգրկվում է լեզվում (լեզվախոսքում) որպէս վերջինիս բովանդակութեան պլան: Այս առումով միտքն ավելին չէ, քան լեզու «ինքնին գոյի» վիճակում (և լեզուն՝ միտք՝ «իր համար գոյի» վիճակում)³: Հակառակ դիրքորոշման դեպքում լեզուն ամբողջովին կամ մասնակիորեն, գիտակցաբար կամ ենթագիտակցաբար, մեկնաբանվում է որպէս մտքի արտաքին թաղանթ (հենքի ըմբռնմամբ, այն է՝ ոչ թե «լոգոս», այլ «անուն»), և նրանից դուրս է մղվում նրա հոգին հանդիսացող բովանդակութեան, նշանակութեան, իմաստի տարրերը:

Բայց սա խնդրի մի կողմն է միայն: (Բառային) լեզվի մեջ գիտակցութեան այդպիսի անմնացորդ ներառումն ամենևին էլ չի պարտադրում հրաժարվել գիտակցութեան ներքին տարբերակումից ըստ առտահայտվածութեան աստիճանավորման, սակայն այն ճշտումով, որ այդ տարբերակումը (չերտավորումը) այս դեպքում տեղի է ունենում հենց լեզվի սահմաններում: Խիստ անհրաժեշտ է լեզվախոսքային կազմավորումներում տարբերակել երկու տեսակի բովանդակութիւն, մեկը՝ լեզվականորեն նշույթավորված, առկայորեն անդամատված, մյուսը՝ շնչույթավորված, ոչ բացահայտ, ենթադրյալ (արդի լեզվաբանութիւնն այս երկրորդ տարատեսակի համար կիրառում է «կանխենթադրույթ»՝ պրեսուպոզիցիա, եզրը): «Առկա (ակտուալ)-ենթադրյալ բովանդակութիւն» հակադրութիւնը պետք է համարել լեզվաբովանդակութիւնը ընտրող կարևորագույն հակադրութիւններից մեկը: Սակայն «ենթադրյալ» ամենևին էլ չի նշանակում «չարտահայտված», այլ միայն՝ ոչ անմիջականորեն, միջնորդավորված ձևով արտահայտված: Գիտակցութիւնն անմիջակա՛նաբան լեզվակա՛ն է այն շափով, որ շափով այն անմիջապէս առկա է լեզվախոսքում տեքստերի, նախադասութիւնների, բառերի, վերջին հաշվով՝ հնչյուն-

³ «Լեզուն իրականացված գիտակցություն և մտածողություն է, իսկ գիտակցությունն ու մտածողությունը՝ չիրականացված լեզու՝ լեզվի վերացական ու տեսական-իմաստային, ընդհանրացված-իմաստային կողմը» (А. Ф. Лосев, Знак. Символ. Миф., Москва, 1982. с. 355).

նային հոսքի ձևով, և (ոչ թե արտալեզվական, այլ) միջնորդավորված լեզվական է՝ իր «ֆունային առկայություն» շափով: Սակայն անգամ այդ լեզվախոսքայնորեն շնչույթավորված նշանակությունները (ընդհուպ մինչև ամենահզոր «հասկացական կատեգորիաները», որոնց մասին խոսվեց վերը) վերջին հաշվով ևս արտահայտվում և առկայանում են լեզվում/խոսքում՝ մակերես թափանցելով նշույթավորված նշանակությունների և նրանց հնչյունական արտահայտությունների միջոցով, և այդ առումով սրանք նույնքան լեզվական են, որքան առաջինները: Նշանակությունների այս երկու տեսակները կազմում են ուղղակիորեն և անուղղակիորեն լեզվական (այլ ոչ թե լեզվական և ոչ լեզվական) բովանդակության շերտեր, այսպես ասած, լեզվական ներկայացման առաջնաբեմն ու ետնաբեմն:— Այդ ամենի լուսաբանմանը գործնականում կարող է ծառայել որևէ՝ թեկուզ ամենապարզ, ասույթ: Այսպես, «Անձրև է գալիս» ասույթն իր անմիջականորեն արտահայտված իմաստից բացի կարող է պարունակել, ասենք, «Տո՛ւր ինձ անձրևանոցը» թաքնված (կանխենթադրույթային) իմաստը, որը սակայն տվյալ իրադրության օգնությամբ բացահայտ է դարձվում հենց «Անձրև է գալիս» իմաստի միջոցով. ուստի վերջինս «Տուր ինձ անձրևանոցը» իմաստի նկատմամբ հանդես է գալիս իբրև մի տեսակ «իմաստաբանական նշան»-արտահայտիչ: Այստեղ պետք է տարբերել առևրվազն հետևյալ երեք շերտերը՝ «Տո՛ւր ինձ անձրևանոցը» խորքային իմաստը որպես «բացարձակ նշանակյալ», «Անձրև է գալիս» մակերեսային իմաստը, որը նշանակիչ է նախորդի, բայց նշանակյալ՝ հաջորդի նկատմամբ, և, վերջապես, Անձրև է գալիս հնչյունա-հնչերանգային կապակցությունը որպես բացարձակ լեզվական նշանակիչ, ընդ որում, առաջին և երկրորդ շերտերի փոխհարաբերությունը սկզբունքորեն նույնն է, ինչ փոխաբերության բուն ու փոխաբերական իմաստների փոխհարաբերությունը: Ուստի այսպես կոչված կանխենթադրույթները, այնուամենայնիվ, լեզվականորեն արտահայտված իմաստներ են, ընդ որում, սրանք արտահայտվում են ոչ միայն այլ լեզվական իմաստների, այլև, հաջորդ քայլում, լեզվական նշանակիչների՝ հնչյունների, առհասարակ լեզվական մատերիական գոյաշերտի միջոցով: Եվ հակառակը. առանց «Անձրև է գալիս» ասույթի «Տո՛ւր ինձ անձրևանոցը» բովանդակությունը ոչ միայն չէր արտահայտվի, այլև պարզապես գոյություն չէր ունենա որպես լեզվական մեծություն՝ դիտակցության աշխարհին պատկանող բառաշերտ (ճիշտ այդպես էլ «Տո՛ւր ինձ անձրևանոցը» արտասանված ասույթը կարող է արտահայտել նաև «Անձրև է գալիս» միտքը, և այլն): Կանխենթադրույթները կազմում են լեզվագիտակցական բովանդակությունների ծավալուն ստորա- և համակարգություններ, որոնց բացահայտումը, վերլուծությունն ու տիպաբանացումը տանում է դեպի անսահմանություն: Այսպես, անգամ սովորական պարզ համառոտ նախադասությունը որպես կանխենթադրույթներ, ըստ էության, պարունակում է բոլոր փիլիսոփայական կարգերը և դրանց բոլոր հնարավոր հարաբերությունները (հմմտ. «Կաղիքը ծառ է» = «Առարկան հատկանիշ է», «Մասնավորն ընդհանուր է», «Բովանդակությունը ձև է» և այլն):

4. Այսպիսով, մաթեմատիկական գիտելիք՝ լեզվի, իսկ մտածողությունը՝ խոսքի (համապատասխանաբար, գիտակցությունը՝ «լեզվախոսքի») անբախտելի մասն է: Ուստի և մտածողություն-լեզու կամ թեկուզ մտածողություն-խոսք, գիտելիք-լեզու հակադրությունները անընդունելի են սկզբունքորեն, քանի որ անթույլատրելիորեն հակադրելով ամբողջն իր իսկ մասերին որպես հավասարազոր պահեր՝ աղճատում են իրականության պատկերը: Մտածողություն-գիտելիքը սպառում է լեզվախոսքի բովանդակությունը, որի արտահայտությունը, իր հերթին, հնչյունն է (ավելի ճիշտ՝ հնչյուն-հնչերանգ դիսամիկ հա-

մակարգումը): Ըստ երևույթին, այդ բանը հստակորեն հասկացած գրեթե միակ մարդը (այն միակ «բացատրությունը», որն ակնարկվեց վերը) Վիլհելմ Հումբոլդտն էր, ըստ որի, մարդու լեզվագործունեության ընթացքում տեղի է ունենում մտֆի ներգործում հոդաբաշխ հնչյունի վրա՝ վերջինս մտքի արտահայտություն դարձնելու նպատակով: Ուստի լեզվի բուն բնույթը հանդիսացող լեզվախոսքային գործունեությունը բնորոշվում է երկու բաղադրիչների՝ մտֆի և հնչյունի միահյուսմամբ և վերածվում դրանց հակադրամիասնությանը: Միտքը (մտածողություն-գիտելիք-գիտակցություն համահյուսվածքը) ամփոփվում է լեզվաբանական բովանդակության պլան և նշանագիտական նշանակյալ հասկացություններով. իր հերթին, հնչյունը, մտքի այլ արտահայտիչների հետ միասին (տառեր և այլն), ամփոփվում է լեզվաբանական արտահայտության պլան և նշանագիտական նշանակիչ հասկացություններով: Այսպիսով, լեզվախոսքի (լեզվական իրականության) ներսում կատարվող բովանդակություն/արտահայտություն հասկացական հակադրությունը գալիս է փոխարինելու լեզվի սահմաններից դուրս բերող լեզու/մտածողություն մտացածին (թեև տարածված) և ըստ էության ճշմարտությունից շեղող հակադրությունը:

Այդ ամենով ինքնաբերաբար մերժվում է նաև աշխարհի՝ վերնագրում նշված իրականություն-մտածողություն-լեզու եռանդամ կաղապարի իմացաբանական արժեքը և գերապատվություն տրվում իրականություն-լեզու (ավելի ճշգրիտ ձևակերպմամբ՝ արտալեզվական իրականություն-լեզվական իրականություն)՝ նույն տեղում նշված ավելի հին երկանդամ կաղապարին, որն ընդունվում է որպես աշխարհի գոյաբանական հորինվածքին առավել համարժեք (աղեկվատ) կաղապար: Ընդ որում, այժմ գոյություն ունեցող լեզվաբանական և լեզվափիլիսոփայական պատկերացումների հիման վրա վերջին կաղապարը հնարավոր է ներկայացնել նաև ավելի տարբերակված ձևով: Այս դեպքում հնարավոր տարբերակված ներկայացումներից մեկը նշվեց վերը. դա լեզվական իրականության, որպես լեզվախոսքային ամբողջության, տրոհումն է լեզվի համակարգային և խոսքի գործընթացային պահերի (և արտալեզվական իրականության համապատասխան տրոհումը գոյի և լինելիության պահերի): Մի այլ տրոհում հանգեցնում է լեզվական իրականության կազմում էութենական-բովանդակային և երևութային-արտահայտական պահերի («պրլաններին»), ինչպես նաև, արտալեզվական իրականության կազմում, էության և երևույթի՝ համապատասխան պահերի առանձնացմանը, ըստ հետևյալ սխեմայի.

<p>արտալեզվական (օբյեկտիվ) իրականություն</p> <p>էություն</p> <p>երևույթ</p>	<p>լեզվական (սուբյեկտիվ) իրականություն</p> <p>բովանդակության պլան (նշանակյալ «միտքը») արտահայտության պլան (նշանակիչ «հնչյունը» և այլն)</p>
---	--

Նման տրոհումների և հարաբերակցությունների թիվը հնարավոր է ավելացնել՝ հիմք ընդունելով, ասենք, ձև (քերականություն)—նյութ (բառապաշար), անհրաժեշտություն (նորմա)—աղատություն (ոճ) և մի շարք այլ կատեգորիական հակադրամիասնություններ. հնարավոր է նաև միմյանց համակցել ստացվող տրոհումները (առանձնացնել, ասենք, լեզվական ու խոսքային բովանդակություններն իրենց արտալեզվական հարաբերակիցներով, և այլն): Այս կապակցությամբ նշելի են նաև որոշ այլ կարգի հասկացական-եզ-

րաբանական հարաբերակցություններ, որոնց գոյաբանական և իմացաբանական արժեքն ավելի մանրամասն քննարկվել է այլ տեղում¹.

արտալեզվական իրականություն

լեզվական իրականություն

գոյաբա-

նական

ասսպեկտ՝ «առաջին բնություն»

«երկրորդ բնություն»

իմացա-

բանական «առաջին լեզու»

«երկրորդ լեզու»

ասսպեկտ՝ (բնական նշանայնություն)

(պայմանական նշանայնություն)

Վերը նկարագրված երկու հակադրամիասնություններից՝ արտալեզվական իրականություն-լեզվական իրականություն և (վերջինիս սահմաններում) լեզվախոսքային բովանդակություն («միտք»)-լեզվախոսքային արտահայտություն («հնչյուն»), առաջնայինը արտալեզվական իրականություն-լեզվական իրականություն հակադրամիասնությունն է, մինչդեռ երկրորդը դրա ուրույն ներլեզվական բեկումն է: Չէ՞ որ արտալեզվական իրականություն-լեզվական իրականություն հակադրամիասնության մեջ արտալեզվական պահ, ինչպես նըշվեց, հենց լեզվով արտահայտվելի՛ք բովանդակություն է (արտալեզվական աշխարհը՝ որպես ներունակ օբյեկտիվ «լեզվախոսք»), իսկ լեզվական պահը լուրջ աշխարհային բովանդակության սուբյեկտիվ արտահայտությունն է (նրա արտապատկերումն է սուբյեկտի գիտակցության մեջ): Օբյեկտիվ և սուբյեկտիվ աշխարհների ահա այս հակադրամիասնությունը, տեղափոխվելով լեզվական սուբյեկտիվ աշխարհ, միջնորդավորված ձևով վերարտադրվում է որպես լեզվախոսքային բովանդակություն-լեզվախոսքային արտահայտություն հակադրամիասնություն (ընդ որում, ըստ դիալեկտիկական անցման օրինաչափության, արտալեզվական օբյեկտիվը լեզվական սուբյեկտիվ աշխարհում հանդես է գալիս որպես բուն սուբյեկտիվ կողմ՝ տրամաբանական, հոգեբանական, առարկայական բովանդակություն, իսկ լեզվական սուբյեկտիվն այդ նույն սահմաններում դառնում է սուբյեկտիվի մեջ հարաբերականորեն օբյեկտիվ, օբյեկտիվացված պահ՝ հնչյուն և, առհասարակ, արտահայտություն):

Լեզվականի նման արտալեզվական հիմնավորվածության (միջնորդավորվածության, պատճառաբանվածության) շնորհիվ լեզվի ու լեզվագործունեության ողջ մեխանիզմի համարժեք ըմբռնման համար ոչ միայն ընդհանուր փիլիսոփայական, այլև անգամ մասնագիտական-լեզվաբանական առումով անհրաժեշտություն է զգացվում նախադրության առաջին իսկ քայլից վերահանել և լուսաբանել մինչ օրս գրեթե արհամարհված այդ առաջնային՝ լեզվի համար արտաքին, հակադրամիասնությունը և լեզվի ինքնապարփակ «սինտակտիկ» քննությունը լրացնել ու հիմնավորել նրա՝ դեպի արտալեզվական ուղղված «սեմանտիկ» (լեզու-իրականություն հարաբերություն), ինչպես նաև «պրագմատիկ» (լեզու-մարդ հարաբերություն) քննությամբ: Պարզ ասած՝ լեզվաբանը պիտի ի վիճակի լինի լեզուն բնկալել արտալեզվական, իսկ արտալեզվականը՝ լեզվական բեկմամբ՝ միաժամանակ պահպանելով նրանց տարբերության հստակ գիտակցումը: Լեզվում նա պիտի կարողանա տեսնել այնտեղ տպավորված արտալեզվական իրերը, հատկությունները, հարաբերությունները (այդ թվում, ասենք, մարդկային զգացմունքի, կամքի, մտքի դրսևորումները), արտալեզվականում՝ նրանում ներունակորեն պարփակված բառերը,

¹ Է. Աթայան, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Ե., 1981:

նախադասութիւնները, տեքստերը՝ ողջ աշխարհը ու նրա պատմութիւնը դիտելով որպէս գերագույն Բան կամ Տեքստերի տեքստ:

Որևէ համակարգ հասկանալու և բացատրելու համար կենսականորեն անհրաժեշտ է դուրս գալ այդ համակարգի սահմաններից և այն զետեղել ավելի ընդգրկուն, խոր ու բարձր համակարգերի կազմում (ինչը նման խորացված ճանաչողութեան միակ հնարավոր եղանակն է), այնինչ լեզվական իրականութեան համար որպէս նման համակարգ ծառայում է ողջ արտալեզվական իրականութիւնը՝ մարդու արտաքին ու ներքին աշխարհների ողջ զանգվածը: Առանց այդ մարդկային և բնական ֆոնը նկատի ունենալու՝ ոչ միայն լեզվախոսքն ամբողջութեամբ, այլև նրանում ընդգրկված որևէ տարր թե՛ կառուցվածքային և թե՛ հատկապէս գործառական առումով մնում է իբրև էապէս անըմբռնելի մեծութիւն (ի դեպ, նույնչափ թերի է արտալեզվականի՝ լեզուն զանց առնող ուսումնասիրութիւնը, ինչով բացատրվում է այն կարևոր տեղը, որ լեզվին հատկացրել են մեծ փիլիսոփաներն իրենց կառնագործական կառուցներում):

Այս ամենով ևս մեկ անգամ հաստատվում է դեպի իրականութիւն-լեզու հնամենի (կարելի է ասել՝ գրեթե նախնադարյան) աշխարհակաղապարը վերադարձ կատարելու անհրաժեշտութիւնը:

Э. Р. АТАЯН.—Лингвофилософская ценность гносеологических моделей «действительность—язык» и «действительность—мышление—язык».—Производится сравнение двух восходящих к античности моделей: двухчленной—действительность-язык и трехчленной—действительность-мышление-язык. Устанавливается, что вторая модель основана на не имеющей объективных корней дихотомии мышление-язык, составляющие которой онтологически слиянны. В качестве адекватной признается двухчленная модель, представляющая диалектическое единство противоположностей внеязыковой действительности и языка. **Внутри** последнего, вслед за Гумбольдтом, намечается производная от первой дихотомия мысль-звук.